

ՄՇԱԿՎԵԼ ԵՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԳԾԵՐ

Որոնք քաղաքացիներին կտրամադրվեն անվճար

Քաղաքաշինության նախարարությունը մշակել է հրատարակել է համայնքներում անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կատալոգ: Դա հնարավորություն է տալիս քաղաքացիներին, առանց լրացուցիչ ծախս կատարելու, կարճ ժամանակահատվածում պատվիրել եւ ստանալ կատալոգում ընդգրկված բնակելի տան օրինակելի նախագիծ: Եթե այլ դեպքերում նման փաստաթղթի վրա ծախսվում է 400-800 հարյուր հազար դրամ, ապա այս կատալոգում ընդգրկված նախագծերը ընտրելիս դրանք տրամադրվում են անվճար:

Ինչպես երեկվա մամուլի ասուլիսում նշեց քաղաքաշինության նախարար ՎԱՐԳԱՆ ՎԱՐԳԱՆՅԱՆԸ, դրանով առնվազն մի քանի անգամ կրճատվում է նաեւ նախագծի պատվիրման եւ շինթույլտվության ժամկետը.

-Սահմանված կարգով ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու, բնակելի տան նախագիծ պատվիրելու եւ շինարարության թույլտվություն ստանալու համար պահանջվում էր առնվազն 2-3 ամիս: Մինչդեռ, մշակված նախագծի համաձայն, նշված գործընթացն իրականացնելու համար կպահանջվի 5-10 օր:

Ըստ նախարարի, կատալոգում ընդգրկված է 1-6 սենյականոց բնակելի տան 17 օրինակելի նախագիծ: Դրանցից 10-ը ընտրվել է մրցույթով: Լրացուցիչ մշակվել է եւս 7 նախագիծ:

Որպես այդպիսին օրինակելի նախագծերի առաջին կատալոգը մշակվել է դեռեւս 8 տարի առաջ:

Այս կատալոգը նախատեսված էր գյուղական համայնքների բնակչության, ինչպես նաեւ սոցիալապես անապահով խավերի համար: Սակայն Վ.Վարդանյանի կարծիքով, այն լայն կիրառություն չստացավ՝ կառուցապատողի համար գնային տեսակետից ոչ մատչելի լինելու պատճառով.

-Ուստի անհրաժեշտություն առաջացավ ստեղծել նոր նախագծերի փաթեթ: Դրանցով կառուցվելիք բնակարանները շուրջ 25 տոկոսով էժան կլինեն նախորդներից:

Այս դեպքում օգտագործվում է համեմատաբար էժան շինանյութ, կիրառվում են պատրաստի կոնստրուկցիաներ: Ի վերջո, նախարարի հաշվարկներով, 1 քառ. մետր բնակնակերեսի կառուցումը կարժենա 350-400 դոլար:

Հրատարակելով նոր կատալոգը, կառավարությունը որոշել է չսահմանափակել մարդկանց իրավունքները եւ գործողության մեջ է թողել նաեւ նախկինը: Այսինքն՝ ցանկության դեպքում նրանք կարող են իրենց ճաշակին համապատասխան պատվիրել այլ նախագծեր:

Ելնելով այն հանգամանքից, որ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերում ճարտարապետի մասնագիտությամբ կադրերի խիստ պակաս է զգացվում, որոշվել է, որ կատալոգում ներառված բազմակի օգտագործման նախագծերը կիրառվեն նաեւ քաղաքային այն համայնքներում, որոնց տեղական ինքնակառավարման մարմին աշխատակազմում չկա ճարտարապետի հաստիք:

Անդրադառնալով քաղաքաշինության այս տարվա առաջին եռամսյակի գործունեությանը, Վ.Վարդանյանը նշեց, որ իրենց առջեւ դրված բոլոր խնդիրները կատարվել են: Իսկ դրանցից հիմնականը մնում է աղետի գոտում իրականացվող բնակելի շինարարությունը.

-Շինարարությունը բնականոն ընթանում է: Նոր կառուցվող բնակարաններին զուգահեռ, վերացնում ենք նաեւ 2009թ. շինարարական աշխատանքներում տեղ գտած թերությունները: Դրանք արդեն 90 տոկոսով վերացված են: Այդ թերությունները վերաբերում էին հիմնականում ներքին հարդարման աշխատանքներին: Մինչեւ մայիսի առաջին տասնօրյակը կվերջացնենք:

Նախնական պայմանագրով Գյումրիում մայիսին պետք է շահագործման հանձնվեր 1056 պայմանագիր.

-Սակայն հանրապետության նախագահի այցից հետո տրվեցին լրացուցիչ հանձնարարականներ, իրականացվեցին նոր աշխատանքներ: Հիմնականում սալիկապատվեցին սանհանգույցները, բնակարանները գազիֆիկացվեցին, ունեցան լոկալ ջեռուցում, խոհանոցներում տեղադրվեցին համապատասխան խոհանոցային պարագաներ եւ այլն:

Հաշվարկվել է, որ ամբողջ աղետի գոտու բնակարանային շինարարության ծրագրի իրականացման դեպքում նման աշխատանքներ կատարելու համար կպահանջվի լրացուցիչ 3,3 մլրդ դրամ: Ուստի ուսումնասիրություններից եւ քննարկումներից հետո որոշվել է, որ կառուցապատողն անհրաժեշտ այդ շինանյութերը պետք է գնի ոչ թե հանրապետությունում, այլ ներկրի անմիջապես արտադրողից. «Արդյունքում մոտ 300 մլն դրամի տնտեսում կունենանք»: Հետագայում նախատեսվում է այդ գումարն ուղղել շինարարական այլ աշխատանքների կատարմանը:

Նկատի ունենալով լրացուցիչ աշխատանքների իրականացումը՝ բնակարանների շահագործման հանձնման ժամկետը 20-25 օրով տեղափոխվել է: Մայիսի փոխարեն դրանք շահագործման կհանձնվեն հունիսին:

Մինչ աղետի գոտում ընթանում է նոր բնակարանների կառուցումը, քաղաքաշինության տեսակետից լուրջ խնդիրներ են ի հայտ եկել վթարային շենքերի հետ կապված.

-Այս առումով ունենք տխուր պատկեր: Բացի աղետի գոտուց, երկրում ներկայումս ունենք 22 բազմաբնակարան շենք՝ 410 բնակարանով, որոնք գտնվում են չորրորդ աստիճանի վթարային վիճակում: Բնականաբար միջոցներ պետք է ձեռնարկվեն դրանք ամրացնելու համար: Յավոք, կան շենքեր, որոնց ամրացնելն անհնաստ է: Դրանք ավելի մեծ ծախսեր են պահանջում ամրացնելու, քան թե նորերը կառուցելու համար:

Նախարարության հաշվարկներով, այս շենքերի վերականգնման համար կպահանջվի 5 մլրդ դրամից ավել գումար:

Սակայն խնդիրը միայն չորրորդ աստիճանի վթարայիններինը չէ.

-Մենք ունենք 522 բազմաբնակարան բնակելի շենք, որոնք ունեն երրորդ աստիճանի վնասվածություն: Հետեւաբար եթե այդ շենքերում շինարարական միջամտություններ չանենք, ապա առավելագույնը 4-5 տարվա ընթացքում դրանք կվերածվեն չորրորդ աստիճանի վթարայնության:

Դա լուրջ խնդիր է: Կարծում են այս տարի հայեցակարգ կընդունվի, կունենանք հստակ ժամանակացույց եւ խնդրին կտանք համապատասխան լուծում:

<<Հայոց Աշխարհ>>

21.04.2010թ